



ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԸ · 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՆՇՄԱՐԲ ԵՒ ՆՇԽԱՐԲ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես երես 257)

Ի. Անցնինք նորէն չովուի կամուրջէն, և երթանք յարենք, քիչ մը դէպ 'ի հիւսիս դառնալով, Սողանլու լեռները ելլելու ի՞նելու և 'ի վանանդ մտնելու: Սուածին հանդիպած գեղս ճամբուն վրայ է գարա—ջոշսա. երկրորդ կեցած տեղս խորսասան աւանն է, վեց ժամ կամուրջէն հեռի, Ստորին բասենոյ գիւղերուն պատուաւորն, 100 տուն բնակչով, փայտաշէն մզկթաւ: Այս երկուքին միջոց դէպ 'ի հարաւ կ'ինկնայ Սալքորի կամ Սալքորա գեղն, երբեմն աւան, և գուցէ աւելի մեծ և շէն տեղի, հիմայ ամայացեալ. Ռուսաց 1829հ պատերազմի ատեն 40 տուն հայ բնակիչ ունէր և աւելի շատ մահմետական: ԺԱ. դարուն սկիզբն թ վասիլ կայսրն Յունաց ասոր քով բանակեցաւ ամնէ մ'աւելի, « խոր « փոսիւ պատնէշ արարեալ շուրջ զբանական », վրաց դէորգէ թաղաւորին

դէմ գայած ատեն: — Շարունակելով ճամբանիս միշտ դէպ 'ի հիւսիսային արենեք՝ լերանց սահմանը կը մտնենք. ձախ կողմէն Տայոց աշխարհին լեռներն են և ձորովի հովիտն. աջ կողմէն Սօղանլովի թեսերը կը տարածուին. ասոնցմէ՝ Ազպապա կոչուած լեռնէն կ'իջնէ վտակ մը, և խան գիւղին քովին անցնելով անոր անուամբ կը կոչուի, և կուգայ կը թափի յերասխ. իր եզերքէն շատ հեռու չէ, իբրև 5 մղոն 'ի խորասանայ, ջերմառկ գիւղն, որ կը յայտնէ տաք ջրերու աղբիւրներ ունենալ: — Ասկէ ալ նոյնչափ հեռու է Զիւին գեղն լերան մը ստորոտ, և համանուն բերդին աւերակին լերան գլուխը, որուն վրայ կը նոյի նոյն լերին բարձրադոյն մէկ գագաթն ալ. 1829հ պատերազմին ատեն հոս բանակած էր Օսմանեանց սպարապետն. բայց երբ չկրցաւ Ռու-

սերը քշել խանայ ձորահովտաց մէջ, ինքն յետ քաշուեցաւ. Որուաք տիրեցին Զուինայ (յունիսի 19են). Թուղթք բերդին տակ ական գործեր էին, որ յանկարծ ճայթելով մեծ մասը փլուց. բայց Բասգեիչ սպարապետն Որուաց որ այն տեղը բռներ էր՝ քիչ մ'առաջ հեռացեր էր զօրքերովը, որով քիչ մարդու վնաս հասաւ: Որուաց հեռանալէն ետև Օսմաննեանք նորէն ուզեցին նորոգել բերդը, բայց անկատար մնաց. 1855⁶ պատերազմին ատենն ալ Անդղիացիք օգնականք Օսմաննեանց քննեցին այս տեղս, և վկայեցին շատ ամուր և յարմար ըլլալը, նաև հրածիդ ուժմբաց դէմ դնելու: Հին ատեն ալ այս բանս աղէկ ճանչուած պիտի ըլլայ. գոնէ Յուստինիանոս կայսեր ատեն, որ Բասենոյ քաղաքին դաշտային դրիցը չհաւնելով, կ'ըսեն, ծրումինայ բերդը շինել տուաւ և ամրացընել և իր անուամբը Յուստինիանուազիս կոչել: Արդ ինծի կ'երևի թէ այն ծումինա ըսուածն է հիմկու Զիւինն. բայց հնութեանց մնացուած մը կամ գրուած մը ինծի չըսին աւելի մօտէն տեսողք:

Զիւինէն չորս հինգ ժամ հեռու է դէպ 'ի հիւսիսային արևելք ուրիշ նմանաձայն բերդ մ'ալ Զադին-զալէ, որ և Քէօր-օղլուի բերդ կ'ըսուի. մօտն ալ նոյն անուամբ լեռ մը կայ. ուրիշ մօտ տեղուանք ալ այս՝ (Քէօր-օղլու) անուամբ բերդեր և լեռներ կը լսուին, 'ի յիշատակ հոչակաւոր դիւցազնացեալ աւազակի մը, որոյ վրայ շատ երգեր և վիպասանութիւնք հիւսուած են: Այս աւերակ բերդին քովին անցնող համանուն վտակին (Զազին-սու) գլուխը՝ Սօղանլուի ստորոտքը՝ Գայընլիլ գեղն է. ասոր քով 1829են (19 յունիսի) Որուսաց հետ զարնուեցան Օսմաննեանք, որք լեռներուն ճամբաները բռներ և Միլլի տիւզ ըսուած գեղին քով կիրճերու մէջ բանակեր էին. Բասգեւիչ սպարապետն Որուաց՝ անկարծելի ճամբաներ բռնելով 8000' բարձր լերանց զագաթէն իշաւ Օսմաննեանց բանակին ետեր. ասոնց սպարապետն Սալիհ փաշայ մէկ կողմէն,

մէկալ կողմէն Հագքի փաշայ փութալով զարկին Որուսացբանակին երկութեերը, ուժերնին հոն թափելով. անոր համար Բասգեւիչ ալ իր վերջապահ գնդովն անոնց բանակին միջին վրայ յարձըկեցաւ, կոտրեց, և լերանց կիրճերուն ուժորերուն մէջ ցրուեց. մնացեալներն ալ շփոթելով քշեց 'ի Հասանգալէ, ինքն յաղթութեամբ մոտաւ 'ի Զիւին: Երկրորդ օրը (20 յունիսի) դարձաւ Հագքի փաշային վրայ 'ի Միլլի փափակ. որ լսելով սպարապետին փախուստը՝ քիչ մը դէմ դնելէն ետև՝ անձնատուր եղաւ. ինչպէս քիչ օր վերջ ալ նոյն ինքն Սալիհ փաշայ կարնոյ քաղաքին դռները բացաւ Բասգեւիչայ, թշնամութիւնը և պատերազմը վերջացընելու: Այս առժովս մեծ բազմութիւն մը մերազգեաց՝ իրենց հարց տուն տեղ և գերեզմանները թողլով՝ դաղթեցան գնացին Որուսաց բաժինը, Մեսիսաց, Վրաց և արևելեան Հայոց կողմերը: Այս Սօղանլու լերանց՝ որ հին ատեն Մեծրաց լերինք կ'ըսուէին, անուանի պատերազմերուն մէջ էր Որուսաց հետ՝ իրենց մեծահոչակ բանաստեղծն՝ Բուշքին, տեղուանքը և դիպուածքը զիտելու, և իր մտաւոր կրակները բորբոքելու համար եկած. բայց եթէ զօրականք մասնաւոր խնամքով չզգուշանային իրեն՝ յանդգնութեանը զոհ պիտի ըլլար հոն. եւ գուցէ Մոսկով Քէօր-օղլու մ'ալ պիտի աւելնար զրուցաց մէջ:

Այս անտառախիտ լերանց ստորոտը համանելով չուզեցի ճամբաս շտկել դէպ 'ի Մժնկերտ մեծ աւան Ստորին Բասենոյ, որ անշուշտ Մաժան անուամբ մէկու մը դաստակերտ է, գուցէ քրմապետին, որդւոյ Բ. Արտաշէսի, և թերևս այս վերոյիշեալ Բասենոյ քաղաքն, որ մինչև Որուսաց պատերազմին ժամանակը բազմաբնակ էր, 500 տուն ունէր. Հիմայ կան հազիւ քանի մը տասնեակը տանց. եթէ ոչ աւանին մէջ գոնէ իր աւերակ լեռնաբերդին վրայ գտուին հնութեան նշխարք: Մտանք անտառային բաւիլներու մէջ, և օրերով թափառեցանք. այս տեղս Հայաստանի սու-

վորական կերպարանքէն տարբերի . նշանաւոր բան մ'է . գրեթէ 100 փարսախ քառակուսի տարածութեամբ՝ կարնոյ, Տայոց, Գուգարաց և Այրարատ աշխարհաց միջոց՝ սեականաշ բանակի մը պէս կանգնած և ինչուան 9000' բարձրութիւն . սոճիք և եղեինք ճապաղ ճիւղերով հորիզոնը բռնած են . գետինն ընդարձակ լեռնատափ մը կը ընայ ըսուիլ կամանտառալեառն . որ արեւուն ճառագայթից դէմանթափանց վահան մը կը ընար ըլլալ՝ եթէ ծառերը կանոնաւոր արուեստիւ կտրուէին . ընդ հակառակն անտառադարմանութեան խընամք չըլլալով՝ օրէ օր ծառերը կը պակսին, « մայրաբուսակ լերինք Մեծրաց » վարսաթափ ամայի ճաղատ կը մնան . փայտերն կը ցրուին չորս կողմի գաւառները, ոչ միայն կրակի և հասարակ շէնքերու համար, այլ և դէմադէմ բերդերու՝ երկու տէրութեանց . կիւմրիի բերդին նիւթը՝ մեծաւ մասամբ ասկէ գնեցին Ռուպ, 60,000 բուպի տալով . պատերազմաց պատճառաւ ալ շատ ջարդ եղած է ծառերուն : Մերկացեալ գետինն շատ տեղ ճախնային և խոնաւէ . այս խոնաւութենէն յառաջ կու գան այն բիւրաւոր կարմիր սոխաւոր ծաղկունքն՝ որոց համար կ'ըսուի թէ Սօղանլու անուանած են լերինքն : Թէ ջըրերուն քով թէ ծառերուն վրայ շատ տեսակ վայրի թռչնոց և հաւուց ձայներ լսեցի, պղտի երամներ տեսայ . չորքոտանեաց չհանդիպեցայ . այլ կէս չորքոտանի կէս երկոտանի թաւամազ բրդոտ անճոռնի այլանդակ կենդանի մը (արջ) տեմնելով վախցայ և փութացայ անտառներէն գուրս ելլելու Սարրգամլը և Տէլի-մուրսա գեղերէն անցնելով, իջայ վանանդայ դաշտը :

ԻԱ. Այս դաշտս ալ՝ ինչպէս առաջըսի, Բասենոյ և Շիրակայ դաշտաց կցորդէ, և ինքնին Անփայտ Բասեն կ'ըսուէր 'ի սկզբան, ինչուան որ « յետոյ վամն հա « տուածին Վղբնդուր Բուլկարաց վրն « դայ բնակելոյ 'ի տեղիսն՝ յանուն նո « րա անուանեցաւ վանանդ »: Սօղանլու լեռներն արևմուտքէն և հիւսիսէն

կը պատեն զա, հարաւէն՝ Երասխանորի բարձր եղերքն, իսկ յարևելից՝ հազիւ նշմարուած բլուրներ՝ կը զատեն 'ի Շիրակայ . բայց աւելի դրական քան թէ բնական սահման մը կայ վանանդայ և Շիրակայ մէջ, ինչպէս և 'ի մէջ երկու Բասեններուն: Բայց այն բլուրներն, կամ երկրին քիչ մը ուռեցքն ալ կը բաժնեն երկու գետոց ջըրերը, երկուքն ալ Երասխայ օժանդակ . մէկն է յարևելս՝ Ախուրեան, որ զՇիրակ կ'ոռոգէ, միւսն յարևմուտս՝ վանանդ ուռոգողն, որ կարսայ գետ կ'ըսուի հիմայ (Գարս-չայը), և 'ի հնումն կ'ըսուէր Մենագետ . և կ'իջնէ Սօղանլուի Տիքմէ և Քէօրօղու լեռներէն, և ժողովելով ուրիշ շրջակայ լերանց վտակներ ալ հարաւային արևմուեան կողմէն դէպ 'ի հիւսիսային արևելք կ'երթայ, և կարս քաջքէն անդին կ'ընդունի Հիւսիսայ-Ծովակէն (Չըլտըր-կէօլիւ) ելած առուն, և անով Զարիշատայ վիճակը բաժնելով կը դառնայ յարևելք, կը մըտանէ 'ի Շիրակ, կը խառնուի ասոր Ախուրեան գետոյն հետ, և անոր հետ յերասխ կը թափի: — Վանանդ ալէծեւ դաշտային է . տեղ տեղ ճահիճներ ունի . բոլոր գետինն 5000' բարձր է ծովու երեսէն, անոր համար քիչ պակաս քան վկարին՝ երկար և սաստիկ ձմեռունի . անոր նման ալ գեղեցիկ գարուն, զով ամառն, և բարելից աշուն . վասն զի թէ և պատող չունի, այլ արմտիք շատ և պարարտ . անոր համար մեր նախնիք անուանած են զնա արգարանի, հացաւէն, խոտաւէն . օդն ալ յստակ և առողջասուն է, բաց 'ի քանի մը ջրամած կողմերէն :

Հին բնակիչքն վանանդայ՝ Բուղզարաց հետ խառնուելով՝ ասկէ իրմւ 2000 տարի առաջ, անոնց խոտորնակ բարքն ալ առին, կ'ըսեն մեր պատմիչք և թգարուց . երկիրն ընդարձակութեանն համար Բասենոյ պէս երկու մաս բաժնուած էր, մէկն բուն վանանդ, մէկալն փոքր վանանդ կամ ֆորակ վանանդայ, որ գուցէ հիմայ Զարիշատը ըսուած վիճակն ըլլայ, կամ թուրքաց թախտին

բասածն՝ կարսայ արևմտեան հարաւային կողմն. երկու մասերն ալ առանձին իշխան ունեին, Ա և Բ ըսուած . Ժ դարուն մէջ (յամի 964) վանանդ առանձին թագաւորութիւն ալ ունեցաւ 'ի ցեղէ Բաղրատունեաց, որ հարիւր տարի տևեց, մինչև երրորդ և յետին թագաւորն Գագիկ՝ Աէլչուկեան թուրքաց վախէն՝ թունաց թողուց երկիրը, և անսոնցմէ առաւ ծամբնդաւ բերդը: — Ոտսաց (1828^b) պատերազմէն առաջ վանանդ 140 գեղ ունէր, Զարիշատ ալ 54: Այս երկուքէն դատ Ղարսայ դաւառին կամ կուսակալութեան վիճակը են նաև կաղզման, կէչուան կամ խուճվան, և Շէօրէկէլ:

Իր շարունակուի:

Խ Մ Վ Ա Ն Ք Ս

Դրաբեանի մը անտիպ յիշատակագիրք :

(Տես Երես 263)

Ահա մեռեալ աշխարհի ըլլալու վըրայ ես: Պէտք է որ երկրաւոր զգեստէ մերկանաս, միայներկնաւոր զգեստներն հազնելու համար: Ա՛լ քեզի համար չկայ աշխարհ. անկից ուրիշ բան պէտք չէ վրադ մնայ, բայց եթէ մեզացդ յիշատակը, խիստ և ծանր ապաշխարութիւն ընելու համար: Հարկ է որ սիրտդ մաքուր և ազատ ըլլայ ամենայն ցանկութենէ, որպէս զի միայն սիրովն Աստուծոյ, և իւր ամենասուրբ Մօրը և բոլոր սրբոցը համար ապրի: Եթէ առաջ աշխարհային ստեղծուած մը կը սիրէիր, հիմա զլստուած միայն պէտք է սիրես. Եթէ առաջ կ'ատէիր մարդ մը, հիմա մեզը միայն պէտք է ատես: Թող հին մարդը, մեռուր զայն և անհետացուր. ծնիր 'ի չնորհս Աստուծոյ. և այս վայրկենիս լմըննայ քուանցեալ և աշխարհային կեանքդ, ուրիշ բոլորովին նոր և բոլորովին երկնային կեանք մը սկըսելու համար: Հրաժարէ ուրեմն աշխարհէ և իր պատրանքներէն. խղդէ ուրեմն և ոչնչացուր սրտիդ

մէջ ամենայն երկրաւոր ցանկութիւն: Պատրաստ ես ուրիշ բան չփրելու բայց եթէ զլստուած, ուրիշ բան չփնտուելու բայց եթէ իր անանց փառքը, և կուրօրէն հնազանդելու իր սուրբ կամացը, մենաստանիս կանոններուն և մեծաւորացդ հրամաններուն:

Դողդոջուն ձայնով մը այս պատասխանելու վրայ էի. բայց այս բառս արտաքերելու ժամանակ, երևակայութեանս առջև եկաւ կարողինայի կերպարանքը, գեղեցիկ և շնորհալի, որուն պէս բնաւ տեսած չունէի: Կրնայ ըսուիլ որ աշխարհ և սատանայ իրենց կարողութեան վերջին ճիգը թափեցին՝ իմ սուրբ առաջադրութենէս զիս ետ կեցընելու համար: Այն վայրկենին ստիպուեցայ սոսկալի բռնութիւն մը ընելու անձիս. կարծես թէ Մարտինոսի ձայնը կը լսէի որ ականջէս կը շնջէր թէ զեռ ողջ էր այս եղկելի աղջիկը. և աշխարհիս մէջ միայնակ և անտերունչ կը մնար, և ինձմով միայն նեցուկ մը և պաշտպան մը կրնար գտնել: Կարծես թէ իր շրթանցը վրայ կը տեսնէի այն հեգնական և չարազուշակ ծիծաղը՝ որ այնչափ անգամ ողբալի գեղծմանց դըրգեր էր զիս. և այն վայրկենին ինձի անսկ մը կու գար որ ասով իմ դրաբեան վանքի մը մէջ թաղուելու համար, կարողինայի ձեռքը՝ հանդերձ իր հարստութեամբքը թողլու տկարութիւնս և թեթեամտութիւնս կը ծաղրէր: Կը խոստովանիմ որ այն վայրկենին ըմբռնեցի այս կնկան համար զգացած կրիցս սաստկութիւնը, և այն ատեն ճանչցայ որ անոր վրայ ունեցած սէրս՝ ինձի հաւտացընել ուզածիս չափ թեթև չէր: Սրտիս մէջ սաստիկ և սոսկալի պատերազմ մը գրգռեցաւ. Երևակայութիւնս այնպէս տաքցեր էր, որ կարծես թէ օտարականաց վերնատունէն կնկան ձայն մը լսեցի, որ բոլորովին կարողինայի ձայնին կը նմանէր. բնական շարժմամբ մը աչքս գէպ 'ի ան կողմը գարձնել ուզեցի. բայց Աստուծոյ ողորմութեամբն սանձեցի զիս:

Աքրան անշուշտ իմացաւ այս իմ